



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՅԻՄՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ԱՍՊԱՐԷՉ»Ի ԽՄԲԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ «ՀՈՐԻԶՈՆ»Ի ՏՆՕՐԵՆԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 13 Մայիսի յետմիջօրեին, Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը «Ասպարեզ» օրաթերթի խմբագիրներ Տիար Աբօ Պօղիկեանի (հայերէն բաժին), Տիար Արա Խաչատուրեանի (անգլերէն բաժին) եւ պատկերասփիւռի «Հորիզոն» կայանի տնօրէն Տիար Հերի Որբերեանի:

Յարգելի հիւրերը եկած էին Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու վերընտրութեան առիթով: Առաջնորդ Սրբազանը մամուլի երեք նուիրեալները ողջունեց ու հակիրճ բացատրութիւններ տուաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի 36րդ նստաշրջանով (կայացած՝ Մայիս 9ին եւ 10ին) բացուող աշխատանքի նոր փուլին մասին: Հանդիպումը առիթ ծառայեց խորհրդակցելու գրաւոր ու լսատեսողական մամուլի զոյգ ներկայացուցիչներուն հետ Ազգային Առաջնորդարանի գործակցութիւնը աւելի սերտացնելու եւ հետեւողական դարձնելու միջոցներուն մասին:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով բարձր գնահատեց «Ասպարեզ»ի եւ «Հորիզոն»ի ժողովրդանուէր աշխատանքն ու Ազգային Առաջնորդարանին հետ գործակցութիւնը, նկատի ունենալով, որ անոնք հարազատ հայելին կը հանդիսանան «Ազգի Տան» գործունեութեան:

## **PRELATE WELCOMES ASBAREZ EDITORS AND HORIZON DIRECTOR TO THE PRELACY**

On the afternoon of Tuesday, May 13<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Asbarez editors Mr. Apo Boghikian (Armenian), Mr. Ara Khachatourian (English), and Horizon TV director Mr. Harry Vorperian to the Prelacy, who had come to congratulate the Prelate on his re-election.

The Prelate briefly reported on the endeavors to be undertaken for the new term, as proposed by the 36<sup>th</sup> Representatives Assembly which took place on May 9<sup>th</sup> and 10<sup>th</sup>. The visit also offered an opportunity for the Prelate and guests to discuss collaborative efforts between the Prelacy and the two media outlets. The Prelate also highly commended the endeavors of Asbarez and Horizon, as well as the cooperation that exists between the three bodies.